

ՀԻՊՆՈՏԻՍՄ

ԲՈՒՆԻ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ

(Հարունակութիւն ¹⁾)

III. ՅԱՐՈՒՅԱՅ (ԱՐԻԵՍՏԱԿԱՆ) ՍՈՆԱՄԲՈՒԼԻՍՄ, ԿԱՄ ՔՆԱՅԱՄՈՒ-
ՔԻՒՆ. (Somnambulisme provoqué.—Възванный Сомнам-
булизмъ).

Քնայածութեան ուսումնասիրելու հարկը ուրիշը.—Քնայածելու ձևը.—Արդեւ-
ոյժի անհետանալը.— Սոնամբուլի գիւրջաւատութիւնը.— Զգայարանքների լա-
բուշի.— Յիշողութիւն և Մտաբերութիւն:

Քնայածութեան ուսումնասիրելու հարկը ուրիշը
և քնայածելու ձևը: Մինչև այժմ մենք գրադարած էինք մեծ Հիպնո-
տիսմի երկու շրջաններով: Լեթարգիայով և կատալեպսիայով: Մեզ մնում է
այժմ նկարագրել նրա երրորդ աստիճանը, այն է Սոնամբուլիսմը կամ
Քնայածութիւնը:

Քնայածութեան ուսումնասիրութիւնը անհամեմատ աւելի կարեւոր է,
քան թէ երկու նախընթաց շրջաններինը: Այս պատճառով էլ Սոնամբու-
լիսմը աւելի է դասուել գիտնականների ուշադրութիւնը, աւելի լաւ է ուսում-
նասիրւած և մենք պարտաւոր ենք աւելի երկար կանգ առնել նրա վրա:

Քնայածութեան ուսումնասիրութիւնը նամանաւանդ անհրաժեշտ է
մեզ որ չնայեալ այս շրջանում ենք պատահում զգալարանքների այն չա-
փազանց լայն և սրտիանք, որը գերբնականին է հասնում և որը տեղի
է տալ տարրի մէջ բազմաթիւ սնապաշտութիւնների արմատանալուն: Բացի
այդ, այստեղ ենք տեսնում այն զարմանալի երեւոյթը, որը դարերի ընթաց-
քում անբացատրելի էր մնացել, որը ահապէս գեր է խաղացել մարդկութեան

¹⁾ Տես «Մուրճ» 1891 թ. № 12:

պատմութեան մէջ և որը չափնի է ալժմ Ներշնչումն (Suggestion) անուանով:

Չը մտանանք, որ տնտեսութիւնը կտնտեսուի է Լիւրի տնտեսութեան վերջին ատարիճանի վրայ, մի քաղ եւ և նա կը բարձրանալ լայն աշխարհ, աշխարհ կ'արթնանալ:

Այսպէս, մինչդեռ լեւիտիական ամենախոր յաւն է,— քնալածութիւնը ամենաթեթեւ ճիւղն է, մինչդեռ անզգալական յիմի մէջ ենթական հորի տակն է և նրա բանականութիւնը, կամքը, խելքը, լուսնադրութիւնը, մի խօսքով նրա ուղեղը անխափանցելի խաւարի մէջ են,— քնալածութեան մէջ հորի ելքին մօտ է և նրա ուղեղը սկսում է լուսատուրել արեւի լուսով և ճշմարիտ որ, լուսնոտի ¹⁾ ուղեղը քայտացածի ուղեղի նման մտած չէ, այլ կարծես, մասամբ վերադարձել է իւր դործունէութիւնը: Կը տեսնենք ինչպէս:

Անզգալութեան մէջ ենթական մի գիտել էր, քարացման մէջ նա մի անոգի արձան էր, իսկ քնալածութեան մէջ ընկնելով ալ պարձանը աղի է ստանում, թէ և դեռ զուրկ է ընտկան խելքից:

Նրա ենթական քարացման մէջ է, բաւական է նրա ճակատը կտմ ծոծրակը շփել ու նա կը բանալ աչքերը, երբեմն մի ծանր շունչ քաշելով, կը դատուի և արթնում մարդու գիրք կ'ընդունի: Ալժմ նա քնալածութեան մէջ է:

Ալժմ նա լսում է, պատասխանում է, շարժւում է, շրջում է, երեւեակում է, շատ բարդ գործողութիւններ է կատարում, անպէս որ դժուար է դանաղանել նրան արթնան մարդուց:

Սակայն նրա կաշու անզգալութիւնը, ձայնի փոփոխումն, մկաններէ զարմանալի ձեւ լարումն,— այս բոլորը բաւական են իսկոյն, մի բաղկի մէջ, համոզելու միզ, որ ենթական քնացած է:

Մտաւոր ուրիշ և ալ ժիւտն հետեւալը: Քնալածութեան բաղմաթիւ երեւոյթները ուսումնասիրելու, մարդ մի առանձին պահանջ է զգում գտնել այն մեծ օրէնքը, որը ղեկավարում է այս զարմանալի չափնութիւնները: Ի՞նչ են արդեօք այն ուղեղային փոփոխութիւնները, այն մոտար խանգարումները, որոնք բանական մարդուն ստորացնում են մինչև ապուշը, խելագարը, մինչև մի ծագելի ուրախան! Այս օրէնքը դեռ գտնւած չէ.— գտնւած են միայն ենթադրութիւններ... Մի բան միայն կարելի է ասել:

¹⁾ Մենք անապրեւելիքով գործ կ'անենք քնալածութիւն, քնաշրջութիւն, լուսնոտութիւն, տնտեսութեան քնալած, քնաշրջիկ, լուսնոտ, տնտեսութեան բաւերը:

Սոնամբուլը կարծես նորածին երեխա է, որը երբեք չի տեսել չի շոշափել, չի հոտոտել իրան շրջապատող առարկաները:

Մի քանի խօսք այս մասին.

Մեր ծննդեան առաջին լուսնից մինչև մեր կեանքի վերջին լուսն մենք «ի ուրձուռմ եմք», աչքինքն, նոր ու նոր տեղեկություններ ենք ամբարտում մեր մտքի մէջ մեզ շրջապատող անձերի և իրերի մասին: Այսպէս, ես հազարաւոր անդամներ տեսնում, շոշափում և գործ եմ անում հազարաւոր գրչակոթներ և ալսօք ես զիտեմ, ինչից են շինած լինում նրանք, թնչ երկնաբան, ինչ հաստութեան, ինչ ձևի են լինում, ինչի են ծառայում և այլն և այլն: Այս հազարաւոր գրչակոթներից ստացած տեղեկութիւնները հաւաքելով իմ ըմբռնողութեան մէջ, տալիս են ինձ գրչակոթի գաղափարը: Այս հիմքի վրա եմ տեսնում մի գրչակոթ ինչ ձևի էլ լինի նա, ինչ նիւթից էլ շինած լինի, որոշեալ չատկութիւններից կը ճանաչեմ իսկոյն նրան և կը հասկանամ, թէ ինչի է ծառայում նա:

Սոնամբուլը կորցրել է այս փորձականութիւնը, այս հմտութիւնը և այս պատճառով նա ալ եւս ոչ ոքի և ոչինչ չի ճանաչում: Նա կը տեսնի այս գրչակոթը իւր բոլոր մանրամասնութիւններով, կը շոշափի և ալն, բայց այս զգացմունքները չեն կարող չարուցանել նրա մտքում գրչակոթի գաղափարը:

Լիւիսի խօսքերով քննադատ միայն ֆիզիկական զգացմունքներ (տեսողութիւն, լսողութիւն) ունի, իսկ մտաւոր զգացմունքները մնած են:

Այսպէս սոնամբուլը, Լիւիսի ատածին համեմատ, նմանում է մի մարդու, որի աչքերը կապել են ու զցել մի անծանօթ մոկթ ներքնալարիկի մէջ, որտեղ նա լսողութիւն առանձնացած է աշխարհից:

Այդ դրութեան մէջ մարդիկ ուշը միտքը անասելի կերպով լարած է. նրա հաշտօքը աշխատում է թափանձել խաւարը, նրա լսողութիւնը սրուած է, որ այս մեռելալին լուսնի մէջ մի որ և է շոշափել լսի, նրա շոշափելիքը դարձանալի կերպով նրանում է, և ալն:

Եթէ զգացարանքների և ուշադրութեան այդ արտասովոր լարման միջոցին, նրա ականջին, օրինակ, «առիւծ» բառն ընկնի, սոնամբուլը իսկոյն կը հաւատայ, կը սարտափի, կը զգայ զազանի ներկայութիւնը ու շատ հաւանական է, որ նրա վրդոված երեակալութիւնը կը պատկերացնի նրա տեսողութեան առաջ երեակալական առիւծին, լսել կը տալ նրա լարած ականջներին գազանի մեռելիւնը և ալն: Արթուն ժամանակ մեր մէջ մի ուժ կալ, կոնսուրը, կամ արգելադրութեան, որը մեղմացնում է մեր ստացած տպաւորութիւնները: Մի օրինակ կը բացատրի մեր միտքը: Եթէ մի արթուն մարդու, որը անցնում է փողոցով, մէկը ձայն տալ «զոհապէս» դեպք չընկնէր», նա մի վալրկեան կը չիթիփ ու կանգ կառնի: Բայց այդ մի ականջարթ մի ալն.— իսկոյն նրա արգելադրը կը միջամտի, կը մեղ-

մացնի լսողութիւնից տուացած տպաւորութիւնը և սղդ արթուն անձն կը հանգստանայ, համոզելով, որ դեռ չկալ:

Քննալածը, որի մէջ մեռած է արդեւապէս, անպայման կերպով կը հաւատայ իւր լսածին, կը համոզւի և նրա համոզմունքը ալեքան ամուր է, որ նա իսկապէս կը տեսնի զետը, կը լսի ջրի խշոցը, և եթէ դուք հրամայէք, կը լացուի աղ ջրում, կը զգայ նրա սառնութիւնը և ալլն: Սոնամբուլը տեղեկութիւն է՝ ունենալով շրջապատող առարկաների, իւր գտնած տեղի մասին, կը հաւատայ, անպայման, անկոնտրոլ կերպով կը հաւատայ իւր լսածին...

Սոնամբուլի դիւրահաւատութիւնը, Այս է սոնամբուլի դիւրահաւատութեան պատճառը: Այս է պատճառը, որ եթէ ալ սոնամբուլին, որի մտքում գոյակոթի տեսքը ոչ մի գաղափար չի լարուցանում, ասէք ապր մի հրացան է», նա կը հաւատայ, և զգուշ կը վարւի ապր երեակական հրացանի հետ: Ապր բաւական է: Ներշնչէք նրան, որ նա աղ հրացանով սպանի այս ինչ երեակական անձին, — սոնամբուլը կ'արձակի աղ երեակական հրացանը երեակական անձի վրա, կը լսի պալթիւնը, կը տեսնի սպանածին վալը ընկած, արնաշաղաղ: Այս օրինակը ցոյց է տալիս, որ մեր վշած փորձնականութիւնը միայն քնած է և մինք կարող ենք զարթեցնել նրան սոնամբուլի լսողութեան միջոցով:

Այս կէտը անհրաժեշտ է չը մոռանալ, որովհետեւ, ինչպէս կը տեսնենք, քնալածութեան մէջ արած ներշնչումները կատարւում են միայն լսողութեան միջոցով:

Մենք կ'ամենում ենք առանձնապէս շեշտել քնալածի այս մտաւոր խանգարման վրա:

Քննալածը, որը կորցրել է իւր փորձնականութիւնը, իւր հրամարութիւնը, ալ ևս չի ճանաչում իւր շրջապատող առարկաները և անձերին, գտնած տեղը, և այս է պատճառը, որ նա չի կարողանում ալ ևս սանձել իւր ստացած տպաւորութիւնները, կորցնում է մտաւոր կոնտրոլը կամ արգելադրութիւնը, որը իւր կողմից հետեւեցնում է մի զարմանալի դիւրահաւատութիւն: Իսկ այս դիւրահաւատութիւնը սոնամբուլին զարձնում է մի կենդանի մեքենա, որը շարժւում է հիպնոսողի ներշնչման համեմատ: Շտապում եմ աւելացնել, որ այս թէօրեան շատ անբաւարար է, ալեքան անբաւարար, որքան և Բոմպֆի, Հալդհայնի, Բրուս-Սեքարի, Բինէ և Ֆերէի, Նիլլերի և ուրիշներին:

Մեր առաջ բերած Լիւիսի թէօրեան գոնէ ալն առաւելութիւնն ունի, որ չափազանց պարզ է:

Սոնամբուլի մէջ կատարւած այս խանգարման լաւ բորոնումն օգտակար կը լինի քնալածական օտարութիւնները հասկանալու համար:

Մենք պէտք է ուսումնասիրենք սոնամբուլի 1) զգալարանքներ լարումն 2) լիսողութիւնը և մտաբերումն: Մի առանձին գլխում կը խօսենք ներշնչման մասին:

A. ԶԳԱՅԱՐԱՆՔՆԵՐԻ ԼԱՐՈՒՄՆ

Տեսողութեան սրութիւն. — Շարեօի և Լիւշիտի փորձերը. — Ռիբերգ. Նօէլի տեսողութիւն. — Լսողութեան սրութիւն. — Փելլիզա X-ի և օրիորդ Նօէլի զէպքերը. — Ճաշակելիքի սրութիւնը. — Լիերօի փորձը. — Շոշափելիքի սրութիւնը. — Այս երեւոյթները զերբնական չեն:

Մենք տեսանք, որ անամբուլի (լուսնոտ) լուր որ զգալարանքները, նրա ամբողջ զգացողական ու մտաւոր աշխարհը, անպատմելի լարման մէջ է: Այս է նրա զգալարանքների համարեա անհատատալի սրութեան պատճառը:

Տեսնենք իւրաքանչիւր զգալարանքի դրութիւնը առանձնապէս:

ա) Տեսողութեան սրութիւնը Վաղուշ լատնի է, որ լուսնոտին միտանը զանազանում է առարկաները, չափն է նմանապէս, որ նրանք կարող են կարող խաւարի մէջ: Մինչև անգամ կապած աչքերով մինչև անգամ եթէ աչքերի ու առարկայի մէջ մի բարակ տախտակ բռնէք, լուսնոտը կը տեսնի առարկան: Պրոֆ. Լիերօն չափաց միևնույն անձի տեսողութեան սրութիւնը արթնութեան ու քնածուրմեան մէջ ու գտաւ, որ այս վերջին դրութեան մէջ հնթական կարող է զանազանել երկու անգամ ասելի հետո տարածութեան վրա, քան թէ արթուն ժամանակ:

Պրոֆ. Շարիօն և Լիւիսը վերցնում են 20 կտոր քառանկիւնի թղթեր, այս կտորներից մէկի երեսի վրա նշան են անում, ենթակալին հաւատացնելով, թէ այս պ. X-ի պատկերն է: Յետոյ խառնում են թերթիկները և տալիս են լուրը ենթակալին, խնդրելով նրան դանել պատկերը. — ենթական արագ ետ է գցում բոլոր թղթերը, պահելով միայն այն կտորը, որի վրա երևակայական պատկերն է նկարած: Այս զարմանալի երևոյթը (Բինէի կարծիքով) բացատրւում է նրանով, որ այդ թղթի կտորի վրա անամբուլի սուր աչքը դուր էր երևի այնպիսի անարթնութիւնների, այնպիսի նշանների, որոնք մասշտաբ չեն մեզ:

Զարմանալի հետաքրքրելի է օրիորդ Նօէլի (Noëlie) պատմութիւնը, որը առաջ է բերում պ. Տադէն: Այս զէպքը ցոյց է տալիս, թէ մինչև որ ատրիճան չափազանցութեան կարող է հասնել անամբուլի տեսողութիւնը:

Տադէն բռնում է քնալած Նօէլիի աչքերի առաջ մի կտոր կարտոն (հատտ թուղթ), և աղջկիւր տեսնում է այս կարտոնի վրա, ինչպէս հալելու մէջ իւր պատկերը և ամեն ինչ որ բռնում են նրա ետևից, սակաւն աչքալէս, որ նրանց պատկերները կարողանան անդրադառնալ կարտոնի վրա: Նօէլին նկարադրում է առարկաները և ճանաչում է այն անձերին, որոնք կանգնած են իւր ետևից և որոնց նա տեսնում է իւր օտարտախ հալելու մէջ: Բազմաթիւ այսպիսի փորձերից վետոյ հեղինակը այն եզրակացութիւնն է բերում մեզ, որ Նօէլին անամբուլիումի մէջ ընկնելով, այն ատրիճան սրատես է դառնում, որ կարտոնը նրա աչքին հալելու տեղ է բռնում:

Հիւանդութիւնից դուրս էլ տեսողութեան սրութիւնը կարող է չափազանցութեամբ հասնել: Այսպէս, չափնի է, որ ընտանականները աւելի հեռու են տեսնում, քան թէ քաղաքացիք: Նեղրները այդ կողմից չափնի են արդէն: Լինքոն առաջ է բերում մը քանի օրինակներ Եւրոպայում չափնի գաղտնատեսներին: Սրանցից մէկը տեսնում է գրպանի փողերը, միւսը գտնում է շորերի տակ թագցրած իրերը, իսկ մէկը — Հատուկ անունով — նշմարում էր երկնքում ալեպիսի աստղեր, որոնք աննկատելի էին ուրիշներին:

բ. Լ ս ո ղ ու թ ի ա ն ս ր ու թ իւ ն ը: Վաղուց բժիշկները նկատել են, որ Նևարդալին հիւանդներին, օրինակ՝ հիստերիկներին լսողութիւնը զարմանալի լարման է հասնում և նրանք հիւանդութեան մէջ լսում են ամենամեղմ շտամներ, մինչև անգամ հարևան սենեակից: Լինքոն խօսքերով համարախոշորն անգամ երրոմն, որոշեալ հանգամանքներում, կարողացել են ձայներ լսել, իսկ չափնի ֆիզիոլոգ Մագենդին (Magendie) առաջ է բերում մի խուլի պատմութիւնը, որը կատաղած զրուկեան մէջ, լանկաթ սկսեց լսել: Բժիշկ Ազանի ասելով, օրիորդ X-ը ծոցի ժամացուցի տիկ-տակը լսում էր մօտ չորս սափէն հեռաւորութիւնով և այլն:

գ. Հ ո ս ո տ ե լ ի ք ի ս ր ու թ իւ ն ը: Երբ ես մտնում էի նրա սենեակը, պատմում էր բժիշկ Ազանը, Ֆելիքս X-ը գլուխը ետ էր գցում և իմ հարցմունքին, ինչ է պատահել, պատասխանում էր. «ձեր գրպանի ծխախոտի հոտը ինձ սատիկ անախորժ է»: Մի անձանօթ մարդ մտնում է մի կնոջ մօտ, որը իսկոյն դիակի հոտ առնելով, գոռում է թէ այդ մարդը լուղարկաւորութիւնից է վերադառնում: Մի կին քառասուն վեց տո հեռաւորութեան վրա վարդի հոտ էր առնում:

Յիշած օրիորդ Նօէլին քնեցնում են, ստիպելով նրան սենեկ իւր հակացքը մի ալցետոմսի վրա, լիտով իսկոյն պատառոտում են ալցետոմսը ու կտորները զանազան տեղեր թագցնում:—Կարասիքի ետեւ, խալիքի տակ, վառարանի մէջ և այլն, իսկ մի կտորը հիւանդին լանձնում: Նօէլին, այդ վերջին կտորը հոտոտելուց լիտով, ընկնում է սենեակները «չան նման հոտոտելով» և գրտնում է թագցրած կտորները ու աշխատում է մշտնել նրանց, որ ամբողջացնի ալցետոմսը: Այդ միջոցին, ասում է Տանգէն, մինք կապում ենք նրա աչքերը թաշկինակով, բաց աղջիկը ալեուամենալին. շարունակում է շարմարացնել կտորները:

Մի ուրիշ փորձ աւելի զարմանալի ևս:

«Մենք գցում ենք անկողնու վրա զանազան սուարկաներ.—ձեռնոցներ, բանալիներ, դրամներ, իւրաքանչիւր առարկան հանդիսականներից մէկից առնելով: Հիւանդը վերցնում է հոտոտում առարկաները, լիտով հոտ է քաշում հանդիսականներից ու ամեն մէկին իրան պատկանող բանը լանձնում, երբեմն սխալելով, նորից սխալով և այլն:

դ. Ճ ա չ ա կ ե լ ի ք ի ս ր ու թ իւ ն ը: Սոնամբուլի ճաշակը այնքան է

ճրարացել, որ հաւատարմ անդամ դժար է Արապէս, նա առանց դժարութեան կարող է զանազանել երկու աղբիւրի ջրերը, որոնց մէջ ոչ մի տարբերութիւն չկալ մեզ համար Առաջ բերենք Լիւթօի մի հետաքրքիր փորձը:

«Լքցրէք 5—6 բաժակ ջուր մինեոն տանկից ու ալլ բաժակների մէկի վրա պահեցէք ձեր ձեռք մի երկու լուրջ միտն: Այս բաժակի մէջ ջուրը մի քիչ կը տաքանալ, բայց այնքան քիչ, որ միտն զգալուն ջերմաչափը կարող է ալլ երեցնել: Քնաածը կը մօտեցնի պոռններին ալլ բաժակները մէկը միտի ետեկից ու խոտն ցոյց կը տալ այն բաժակը, որի վրա դուք բռնել էիք մէկ բալլ: ձեր ձեռքը»:

և. Բայց բոլոր զգալարանքներից ամենամեծ դիւրազայութեան հասնում է շոշափելիքը: Մեր կաշին մի քանի զգայողութիւններ ունի, նա զգում է ցաւ (կտրելուց, ծակելուց)—այս ցաւ զգալու թիւնն է, նա զգում է ցուրտը և տաքը—սառը կամ տաք զգալու թիւնն է, վերջապէս նա զգում է քնածանալը շոշափումն, երբ մի առարկայ դիպում է կաշուն:

Արդ, քնաածը կաշին կորցրել է ցաւ զգալու թիւնը, այն ինչ միտ զգայողութիւնները սատարիկ դարգայման են հասել:

Յալտնի է, թէ որքան նուրբ է լինում կաշւերի շոշափելիքը: Արանք իրանց մատի ծաղրերով շոշափում են ալնպիտի անձան անլարթութիւններ, որոնք անմատչելի են ոչ-կտրելին: Մի կտրկին, օր. Մակ-Եօյե (Mac-Evoie) այնքան ընտելացրել էր իւր շոշափելիքը, որ մատի ծաղրով շոշափում էր տաղադրական տատերէ անլարթութիւններ, մատով գրքեր էր կարդում:

Եթէ անամբուլի քամակին կէս արշին հեռաւորութիւնով բռնէք ձեր ձեռք, նա սատարիկ տաքութիւն կը զգալ, իսկ եթէ մի սառը առարկալ բռնէք, նա կը դողալ: Ինչէն հաւատացնում է, որ սոնամբուլը (լուսնոտը) մինչև անգամ հազնած չորերի միջով ճանաչում էր ձեռ տաղին:

Մենք ակնհաստիս ենք եղել համարեա հրաշքալին փորձերի, որ անում էին Պարիզի Pilié հիւանդանոցում բժիշկ Իլիամեպալիս ու Մանյանը:

Յալտնի է, որ կաշու զրդուումն լարուցանում է մկանների կարկամումն: Արթուն գրութեան մէջ զրդուումը պիտի բաւականին սատարիկ լինի, այն ինչ քնաածութեան մէջ ամենաթուղ զրդուումն անգամ կարող է ամենասատարիկ մկանների ձգձգումն առաջացնել:

Բաւական էր մատը դիպցնել տալ կաշու մի որ և է մատին, որ ամբողջ տոը կռկէր: Մի կաթիլ ջուր կաթացնելով, կամ մի թիթն կերպով հեռից փչելով, կամ արևի ճառագայթներ ուղղելով տալ, ձեռի մի մատի վրա, մենք այս անդամներէ սատարիկ կարկամումն էինք լարուցանում Իլիամեպալիէն հեռախօսի (Փոնոդրաֆ) միջոցով, որը հեռու սննակներէ կը բերել տէր, կամ ծոցի ժամացույցը մօտեցնելով կռկեցնում էր քնաածի տոը և ալլ:

Արապէս, Մանյանի խօսքերով. «անսահման թուլ զրդումն անգամ կարող է ծնեցնել սահմանափակ, բայց սատարիկ կարկամումն»:

Սոնամբուլի զգալարանքների այս հրաշքալին լարումն վերին ստի-

ճանի կարևոր գիտելիք է, մինչդեռ ամբողջ աշխին ճա գերբնական նշանակութիւն է ստանում:

Եւ, ճշմարիտ, ինչ զարմանալի երևոյթ, Ահն մի արարած, մի կին կամ սղամարդ, որը արթնում ժամանակ հասարակ մահկանացու էր և որը քնալածութեան մէջ ընկնելով, խոսի աչքերով կարդում է, որի լսողութիւնը, հոտոտելիքը, կաշու զգացողութիւնը ալս չափ լարած, ալս չափ անբնական չափազանցութեան ևն հասնում: Երեակալեցէք, որ ալսպիսի երևոյթներ ցոյց տալ ձեզ մի դերիշ, մի բռնա, մի որ և է կեղեքող և ամբողջի սնապաշտութիւնից օգտուող մի չարագործ, ինչ տպաւորութիւն կը գործի ճա իւր ալք փորձերով տգէտի ուղեղի վրա!

Բայց ալս մասին կետով:

Առ ալժմ բաւականանք միալն ցոյց տալով, որ հիպնոտիսմից դուրս էլ նկատուել են նոյնաման երևոյթներ: Ահն ինչ է ասում Կաբանիսը (Cabanis). «մի քանի ճեարդալին հիւանդների վրա կարելի է նկատել, որ զգալարանքները ընդունակ են դառնում ալսպիսի զգացողութիւնների ըմբռնելու, որոնց նրանք չեն կարող ըմբռնել բնական դրութեան մէջ: Նրանք կարող են նշմարել խոշորացուցական (չափազանց մանր) առարկաներ, տեսնել ամենախոր խաւարի մէջ, մի քանիսը ընդունակ են շան ճման հոտոտելով մարդու քամակից ընկնելու:

Մեզ հնչտ կը լինէր օրինակներ բերել հիւանդների կեանքից Կաբանիսի ալս խօսքերը արդարացնելու համար, բայց ալք մեզ կը տօրպէր մտնել հիատերիալի ու ճեարդալին հիւանդութիւնների աշխարհ:

B. ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՏԱԲԵՐՈՒՄՆ

Ինչ են յիշողութիւնը և մտաբերումը.—Օրինակներ.—Օրինորդ. Ա. ի գէպը.—Իբրօթ օրինակը.—Արթնացնելու միջոցները:

Մեր ուղեղը մի ամբար է, որտեղ հաւաքում են մեր հինգ զգալարանքների միջոցով ստացած տպաւորութիւնները: Այս տպաւորութիւնները անտարակոյ տարբեր են միմեանցից, քանի որ մեր զգալարանքների դործունէութիւնն էլ տարբեր են: Մի որոշեալ առարկայից ստացած տպաւորութիւնները, դրոշմւելով մեր մտքում, կազմում են ալն, ինչ որ հոգեբանները անանում են մտապատկեր (idée-image).

Իւրաքանչիւր առարկալ իւր մտապատկերն ունի մեր մտքի մէջ, բայց դա մնում է քնած, մինչև որ մի որ և է դրդում կենդանութիւն չը տալ նրան:

Յիշողութիւնը մեր ուղեղի ալն չափաւորութիւնն է, որի շնորհիւ մի որ և է առարկալից ստացած տեսողական, լսողական, շոշափական, և ալլն տպաւորութիւնների չափերը պահպանւում են մեր մտքի մէջ: Ուրքան մանրամասնօրն

և ուշադրութիւնով զննենք մի առարկայ, անքան պարզ և անքան նման կը լինի մեր ուղեղում նրա մտապատկերը: Այդ է պատճառը, որ անբանը, որ մենք բաճախ ենք տեսնում, ան մեղրիան, որը բաճախ ենք լսում, աւելի խոր է մտնում մեր վիշտիկեան մէջ: Մի ուրիշ անգամ գուցէ մեզ լաջողութի մանրամասն խօսել մեր ուղեղի այս սքանչելի լատիտիւեան մասին, առ ալժմ բաւականանք ասելով, որ ոչ մի տպաւորութիւն անկողք չի անցնում և որ կան բաներ, անցքեր, պատկերներ, ձայներ, որոնք մենք տարիներով մոռացել էինք և որոնք մի օր մի զրոյման ազդեցութեան ներքոյ լանկարծ կը զարթնեն և կը պատկերանան մեր առաջ շատ թէ քիչ պարզ կերպով:

Այն ընդունակութիւնը, որի շնորհիւ մենք կարողանում ենք ետ կանչել և կենդանացնել մեր մտաւոր աչքերի առաջ վաղուց քնած մտապատկերները—կոչւում է մտաբերումն, (remémoration, припоминание),

Սոնամբուլիսմի մէջ վիշտական ընդունակութիւնը ճշմարիտ, որ quasi—գերբնական չափազանցութեան է հասել:

Բոտտէյ ¹⁾ (Bottey) պատմում է, որ մի քնալածի թեւաղում էին մի էջ գրածք ու, մինչդեռ նա գրում էր, փախցնում էին գրած թերթերը ու մի ուրիշ սպիտակ թերթ զնում առաջինը: Քնալածը սպիտակ թղթին նակելով կարդում է թեւաղած էջը:

Սովածը օրինակ է բերում մի սոնամբուլի, որը առաջիկայ օրը մի երկար գլուխ գրածք էր լսել և միւս օրը բառ առ բառ կրկնել էր նրա առաջին աղ հատածը:

Պրետիտէնի (Petitin) մի հիւանդը, որին մի անգամ միայն 50 րոպե տոնաւոր էին կարդացել, կրկնեց առանց սխալելու:

Մորոն պատմում է, որ 12 տարեկան մի պատանի, որը լատիներէն չը գիտէր, քերթի մէջ ամենանուրբ լատիներէն լեզուով էր խօսում:

Րիբօի (Ribot) գրքի մէջ մի քանի ուրիշ օրինակներ էլ կան անծանօթ լեզու խօսալու վրա,—այս բացատրում է նրանով, որ այդ անձնատրութիւնները երբ և իցէ լսելիս են եղել իրանց կրկնած բառերը ու ալժմ հիպնոսի մէջ ընկնելով, մոտարելում են նրանց:

Առհասարակ, ասում է Կիւլլերը (Cullère) բաւական է երբեմն սոնամբուլի առաջ մի անգամ միայն երկար հատածներ կարդալ, նա կը կրկնի առանց սխալելու:

Օրբիօրդ Վ.-ի գէպքը Թոդ Ներուի առաջ բերել պրոֆ. Լիւլիսի պատմած գէպքը, որը վիշտութեան և մոտարելման սրտիկեան մի զարմանալի օրինակ է:

¹⁾ Այս մի քանի օրինակները գաղւած են Րիբօի գրքէն:

Պրոֆ. Լիւլիսը Հիպոնոտիսմը դասերին քանի ժամանակից վեր ներկայ էր գտնուում օրիորդ Վ... օտար լեզուների վարժուհի, մի վերին աստիճանի զգալուն արարած, որը չափազանց հետաքրքրուում էր այս գիտութիւնով: Չը նազած, որ (ինչպէս ինքն էլ խոստովանում էր) այդ օրիորդը լաւ չէր ըմբռնում պրոֆ. զաղափարները, և չէր հասկանում տեխնիկական շատ բաներ, դարձեալ այդ դասերը դրուժում էին անշուշտ նրա փնդութիւնն մէջ: Պրոֆեսորը նրան սոնամուր էր դարձնում ու հաւատացնում է, որ նա օր. Վ... չէ, այլ պրոֆ. Լիւլիսն է և տէպը է իսկոյն մի դասախօսութիւն անի հիպնոտիսմի վրա: Այն ժամանակ մի զարմանալի տեսարան է ներկայանում մեր առաջ: Օր. Վ...ն կերպարանափոխուում է, խորխոսանում, ընդունում է պրոֆ. Լիւլիսի բարրատը, նրա շարժումները, մինչև անգամ նրա ձայնի ելակները: Եւ սկսում է դասախօսել պարզ մաքուր ֆրանսերէն գիտնական ոճով, իւր տեղին բժշկական բառեր դրածակելով, բառեր, որոնց խնատըր նա արթնութեան միջոցին չէր հասկանում... Բազմ այդ գեղ. ոչինչ: Նրան մի հիպնոտող անձն են ներկայացնում, օրիորդը սկսում է իւր փորձերը այդ անձի վրա, քննեցնում է նրան, ցոյց է տալիս հիպնոսական երևոյթները և այս բոլորը նոյն պրոֆեսորի ձեռքով... Յետոյ նրան արթնացնում են.—ամեն բան մոռացած է...

Ապաղէս, տպագրութիւնների աշն քտքերը, որոնք արթնում ժամանակը քնած էին, սոնամուրչիսմը մէջ լուսաւորում են և երևան գալիս, նոյնանման երևոյթներ նկատուում են և բնական քնի ու մինչև անգամ արթնութեան մէջ:

Ո՞ւմ չի պատահել քնի մէջ մի խնդրի որոշում տալ, մի որոնած բառ գտնել, մի մոռացած դէպք մտարկել, Պատմում են, որ Ռաֆայէլը քնի մէջ տեսաւ իւր լալտնի Աստածամօր գծադրութիւնները, որը նա կտաւի վրա նետեց... Խնձ պատահել է երազի մէջ վաղուց հետաքրքրող շատ հարցերի լուծում տալ և շատ անգամ երկար ճառեր խօսել այն լեզուներով, որոնց ևս շատ անկատար կերպով գիտեմ: Անշուշտ աշն լեզուներով երբեմն կարողացած բաները դրուժել էին փնդութեանն մէջ և քնի ժամանակ միայն արտաւայտուում էին:

Յաճախ մի մեծ վրտանդի ժամանակ մարդ մտաբերում է իւր կեանքից արնպիսի գէպքեր, որոնց երբէք չէր փնդում:

Բիրոն մի քանի օրինակներ է պատմում իւր գրքի մէջ:

Մի օր ևս ջուրն ընկալ ու քիչ էր մնացել, որ խեղդէի: Արդէն սկսելի ջուր կուլ տալ և դդում էի, որ մի վաղրեանից քտուլ ալ ևս անկալող կը լինեմ չնշառութիւնս պահել: Այս ճղնաժամին ես բոլորովին հանգիստ էի, կարծես հաշտել էի ճակատագրիս հետ ու միանգամայն անվրդով կերպով սպասում էի մահւանս բողբին: Յանկարծ խոսի աչքերիս առաջ մի նոր աշխարհ բացւեց, եւ իմ ծննդաւայրուան էի, ծնողներով ու ազգականներով չրջապատած, մի փոքրիկ երեխա: Շատ ազգա-

կաններին գէմքերը, որոնց բոլորովին մոռացած էի, զարմանալի պարզութիւնով երեսցին ինձ,—ես լսում էի նրանց ձայներն անդամ... Յետոյ մի ակնթարթում հարիւրաւոր պատկերներ իմ կեանքից անցան առաջովս մի ախտատու որ լուծով տնուած... Ալիմ երբ խորատուղւում եմ ու ճգնում մտաբերել այդ պատկերները, տեսնել այդ գէպքերը, համոզւում եմ, որ անդամալի կերպով կարած են նրանք ինձ համար:

Բայց արթնութեան մէջ էլ կարող ենք այդպիսի զարմանալի մտաբերումներ նկատել:

Մի տիկին, պատմում է Բիրօն, որը մերձ ի մահ հիւանդ էր, Նոնդոնից տարւում է դիւղը՝ Նրա փոքրիկ աղջկիւր, որը զեռ. չէր խօսում, բերւում է մօր մօտ և խնայն ետ տարւում քաղաքը, իսկ մայրը մի քանի օրից զետու մեռնում է: Մի օր, երբ այդ երեխան չափահաս կիւն է դառնում, պատահմամբ մանում է այն տնեակը, որտեղ նա տնեակ էր իւր մեռնող մօր հետ ու մի օտարոտի կերպով լուծւում է: «Ինձ թւում է, ասում է նա, թէ ես արդէն եղիւ եմ այս տնեակում: Այս անկիւնում պարկած էր մի կին, որը շատ հիւանդ էր,—նա կուսցաւ իմ երեսին ու լաց եղաւ...»

Հիւմի երեակակցէք, որ այսպիսի մի գէպք պատահի ամբոխի մէջ—չէ որ այդ աղջկան կամ սրբերի կարող էր դասն, կամ նրա վրա կը նաւեն, ինչպէս մի զաղտնատեւի, մի սատանայական տնձնատրութեան վրա!...

Այն ինչ այդպիսի գէպքեր ամեն րոպէ պատահում են մեզ և ոչ ոք էլ չի մտածում զերբնական համարել նրանց: Ո՞ւր չի պատահել հեռանալ մի քաղաքից 5—10—20 տարով կորցնել ոչ միայն իւր բնակած տան, այլ և ամբողջ քաղաքի, նորա փողոցների մտապատկերները: Բայց ահա դուք մտնում էք այդ մոռացած քաղաքը և կամայ կամաց հին տալարութիւնները պարզւում են, լուսաւորւում ու իւրաքանչիւր փողոց, իւրաքանչիւր սուռն ձեզ ծանօթ է թւում և դուք մի րոպէի մէջ վերանորոգում էք ձեր հին վիշտութիւնները, իրանց մանրամասներով—դուք ձեզ 20 տարով աւելի ջանել էք տեսնում:

Եւան հազարաւոր մտապատկերներ, հազարաւոր վիշտական վտքեր, որոնք քնած են մեռւում տարիներով, այնպէս որ մենք նրանց արդէն վաղուց մոռացած ենք համարել, և այդ վիշտական վտքերը լանկարծ մի որ և է գրդման աղղկութեան տակ զարթում են, մարմնանում և ներկայանում մեր մտաւոր աչքերին...

Ո՞չ, արտեղ զերբնական ոչինչ չը կա: Այո, մենք կարող ենք սքանչանալ տեսնելով մարդկալին մտքի արդարմանալի հարստութիւնը, մենք կարող ենք ապշել ուղեղի այս սքանչելի գործունէութեան առաջ, կարող ենք լափշտակել մարդու հոգեկան հրաշալի աշխարհով—բայց չենք մոռանալ երբէք, որ այս երեւոյթները բնական երեւոյթներ են, մինչդեռ նրանք մեր ուղեղի գործունէութեան պտուղն են, նրա գոյութեան արդասիւք...

Ջարմանալ հոգեկան երևութների վրա կը նշանակի զարմանալ, թէ ինչպէս մի հատիկ կորիզից մի ամբողջ ծառ է ծլում!...

Քանի ժամանակ կարող է տեսլ քնալածութիւնը? Այդ հարցին զժամար է պատասխանել. եթէ քնալած դրութիւնը երկար է տևում, ենթական կրկին ընկնում է անդշալական քնի մէջ. Լիւիսը հաւատացնում է, որ մէկի արեւաձայն լուսնոտութիւնը 45 օր տևեց, Հիւանդը քնի մէջ դուրս եկաւ Պարիզից, նստեց երկաթուղի, դնաց Լիւսն, լիսուռ ոտով շրջեց Շանցարիս-կում, անցաւ Ալպիան լեռները և ալէն. Մենք կը տեսնենք, որ բնական լուսնոտութեան մէջ այդ կարելի է, բաց չարուցած սոնամբուլիզմի ալս առաջին օրինակն է:

Արթնացնելու միջոցները Քնալածութիւնից ենթակալին արթնացնելու համար, բաւական է մի թեթեւ փշել նրա աչքերին, որոնք երբեմն բաց են լինում, բաց երբեմն էլ փակ. Աւելի լաւ է ներշնչումով զարթեցնել, ասելով նրան՝ «Մի բոպէից լետու դու կ'արթնանաս»:

Սոնամբուլիզմի մէջ նկատած ամենաշանաւոր երևութը անտարակուս ներշնչումն է, ուրիշ իւր կարևորութեան պատճառով մենք մի առանձին գլուխ պիտի նւիրենք:

ԳԼՈՒԽ Գ.

ՆԵՐՇՆՉՈՒՄՆ — SUGGESTION — BHVSHIEHIE

Ներշնչումի առաջին ուսումնասիրողները. — Երևակայական ալլէ. — Շարժումներէ ներշնչում. — Զգացողական ներշնչում. — Անձնաւորութեան փոփոխում. — Միակողմանի ցնորքներ. — Բնազգեցիկ ներշնչումներ. — Ներշնչային արիւնհոսութիւններ և վերակէտեր կամ արնազրոյթներ. — Աւշադրութեան կենտրոնացման թէօրիան. — Գործողութիւնների ներշնչում. — Ընդհանուր հայեացք ներշնչման վրա:

Որչափ օտարոտի էին մինչև այժմ նկարագրած երևութները! Ահա մի առողջ մարդ, մտաւորապէս և ֆիզիքապէս մի առողջ անձն, և մի րոպէ նրա հալացքի առաջ բռնում ենք որ և է աւարկալ ու ալդ շարժուող, խօսող էակը դիակ է դառնում... Եւ բացում եմ նրա աչքերը. — այդ դիակը կարծես կենդանութեան մի նշուլ է տաճում, թէև դեռ դատողութիւն, լեզու, զգացմունք չը կար նա մերթ ընկնում է քարացման մէջ, մերթ կապիկ է դառնում ու մեր բոլոր շարժումները կրկնում... Հիմի ես ձեռ եմ տալիս նրա գլխին և դրանով միայն ես մի արտատուր, համարեա անհաւատալի զգալութիւն եմ ներշնչում նրա զգալարանքների մէջ, մի գրեթէ դերձական մտաւոր գործունէութիւն...

Բաց այդ բաւական չէ. — հիպնոսի ուսումնասիրութիւնը դեռ ուրիշ ասլի զարմանալի լատնութիւններ պիտի երևան հանէր!

Այդ ենթակամ (անձը), որը այժմ քնաչածութեան մէջ է, մի խաղալիք է դառնում մեր ձեռքին, մի բանաւոր խաղալիք, որի մէջ կամքը և այն ինչ որ մենք անւանեցինք կոնտրոլ, արդեւապէ՛ մուծած է:

Քարացման շրջանում մենք ստիպում էինք ենթակային կապիկանալ իւր շարժումներով, քնաչածութեան մէջ այդ կապիկութիւնը կարող ենք անել ևս զարգացնել, որովհետեւ մեր հաճութիւնը կարող ենք փոխել լուսնոտիի զգացողութիւնը, շարժողութիւնը, նրա միտքը, հասկացողութիւնը, նրա ոգին, վերջապէս նրա ևսը:

Նւ այս դարմանալի փոփոխութիւնները կատարելու համար բաւական է հիպնոսողի բերնից դուրս եկած մի բառ միայն:

Մենք խօսում ենք ներշնչման (suggestion) վրա:

Ն երշնչման առաջին ուսումնասիրողները Մենք տեսանք (գլուխ Ա.—Մեամերիամ), որ արեղաչ Ֆարիան ներշնչումով էր քնացնում իւր ենթականերին և պատր Ֆարիան կարող է ներշնչման թէօրիալի հայրը համարւել:

Սակայն ներշնչման ուսումնասիրութեան փառքը ամեն իրաւունքով Նանսիի պրոֆեսորներին է պատկանում. Լիերոն 1866 թ., լեռու Բերնհայմ (Bernheim), Բոնիս, և Լիեժուան (Liégeois): Նանսիի հետազոտութիւններից լեռու, ներշնչումն սկսեց ուսումնասիրւել և ամբողջ աշխարհում:

Մենք արդէն այս գլխի սկզբին ծանօթացանք ներշնչման մի քանի երևութների հետ: Նրբ-մենք քնաչածին մի առարկալ մի ուրիշի տեղ ենք ընդունել տալիս, երբ մի խօսքով գրչակովքը հրացանի ենք փոխում, կամ առակ ենք երեցնում նրան աշտեղ, որտեղ առակ չը կալ, կամ երբ նրան ստիպում ենք պրոֆեսոր Լիւլիս դառնալ ու սրա նման դասախօսութիւն անել, — մենք այս բոլորը անում ենք ներշնչման օրէնքով:

Ապալէս, ներշնչումն քնածի այն ուղեղային դրութիւնն է, որով նա ընդունակ է լինում կամ, անել ճիշդ ասենք, ստիպւած է լինում հաւատալ հիպնոսողի հաղորդած մտքերին, որքան էլ անհիմն, անհաւատալի ու ցնորական լինին սրանք: Բաց հաւատալը բաւական չէ. ներշնչման ենթարկւածը, իւր ամբողջ մտաւոր ու ֆիզիքական աշխարհով, անձնատուր է լինում ներշնչած դադախարին:

Ն երևակալական ալգիւ Նս ասում եմ քնաչածին այս երկու բառը միայն. «դուք աղիւսումն էք» և խկոլն նա իրան ալգու մէջ է տեսնում: Նրա աչքին տարածւում է մի լիզէալական պարտէզ, իւր ծառերով ու ծաղիկներով, ալլէներով ու շատրւաններով. նրա աչքերը տեսնում են ալգին, նրա հոստոնքիքը զգում է ծաղիկների բուրմունքները, նրա ականջը լսում է թռչունների երգը կամ շատրւանի խշոցը... Նւ այդ զգացողութիւնը աչքան վառ է, այն աստիճան խառուիկ, որ քնաչածը վեր է կենում տեղից, զբօսնում է երևակալական ալլէներում, լացւում է ցնորական ջրով, քաղում է և փունջ կապում միայն իրան տեսանելի ծաղիկներից: Խակ այս

միջոցին նրա դէմքը անսահման երջանկութիւն է արտայայտում, երբ նա հոտոտում է մի վարդ, կամ ունկնդիր է լինում թռչունների երգերին: Բայց ահա նա լացում է ջրի մէջ, ջուրը սառն է, մի քիչ անախորժ ու նա տրտիպալով սրբում է երեսը իւր գոգնոցով: Ահա նա մի վարդ է ուզում քաղել ու չանկարծ մի փուշ ծակում է նրա ձեռքը. նա գանգատւում է, երեսը ցաւ է արտայայտում ու նա լաւում է մատի արիւնը և ալլն և ալլն: Պէտք է ականատես լինել այս հրաշալի փորձերին, որ մարդ հասկանալ, թէ մինչև որ ատրիճան կարող է քնալածը լափշտակել երեսակալութիւնով...

Պօլ Ժանէլին հետեւելով մենք ներշնչումն կը բաժանենք երեք կարգի. Շարժումն երբ ներշնչում, զգացողական ներշնչում և գործողութիւնն երբ ներշնչում:

I. ՇԱՐՃՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

Նիւթէ հիպնոսողը ասի ենթակալին. «պտտէք ձեր ձեռները իրար քամակից», նա կտկտի շարժել իւր ձեռները և կը շարունակի: Այս քանակաբանութիւնը ասէք նրան. «ձեր աջ թեւը, կամ ձախ ոտը, կամ երկու թեւերն էլ, և ալլն կաթածահարած են, դուք չէք կարող շարժել ձեր ձեռները, չէք կարող ոտի կանգնել» և հիպնոսածը անկարող է մի որ և է շարժում տալ իւր անդամներին: Ասեցէք նրան, թէ նրա ոտը միտած է լատակին, նրա ձեռը կապած է սեղանին, կամ նա ինքը ձուլւել է ակտին, և դուք մի ծիծաղաշարժ տեսարանին կը հանդիսանաք. — քնալածը իւր ըղրոր ճիղը կը թափի ոտը դետնից կտրել, կամ ձեռը սեղանից պոկել, կամ նստած տեղից վերկենալ, նա լուսահատական ցնցումներ կանի, բայց միտած կը մնայ իւր տեղը... Մենք կարող ենք միևնույն կերպով նրա «լեզուն կապել», կակաղել տալ: Այս դէպքում խղճալի է աչն արեւտական համբը, որը բերանը լալն բացած, կոկոսողալին հնչիւններ է արձակում և ձեռը լուսահատութեան մէջ լեզվին ու շրթունքներին տանում, կարծես, աշխատելով արդէլքը հեռացնել:

Ներշնչման այս օրէնքի վրա են հիմնած աչն «հրաշքները», որոնց կատարելու համար հարկաւոր չէ սուրբ լինել:

Այս աղնայիսի նեւարդալին արարածներ, որոնք չանկարծ կաթածահարւում են մի տոբից, մի թեւից, կամ երկու տոբից, երկու թեւերից էլ, կամ մարմնի կէսից և թոյլ անդամաւորժ են դառնում: Նիւթէ մենք աղնայիսի հիւանդին սոնամբուլիումի մէջ գցենք և ներշնչենք նրան, թէ նրա թուլացած անդամը առողջ է, հիւանդը կ'սկսի շարժել աղ անդամը: Բայց այս մասին մանրամասն կը խօսենք երբ կ'ուսումնասիրենք հիպնոսիումը, իրեն բուժական միջոց:

II. ԶԳԱՑՈՂԱԿԱՆ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

Պատրանք կամ Իլլուզիա (Illusion).—Յնորքներ կամ Հալլուցինացիա (hallucination).—
Պրակտիկ և բացասական ցնորքներ.—Սրինակներ:

Ներշնչման միջոցով մենք կարող ենք զարմանալի փոփոխություններ մտցնել տեսանյութի զգացողությունն մեջ: Մենք կարող ենք ներշնչել նրան, թէ նրա մարմնի մի մասը ոչինչ չի զգում քնի մեջ կամ արթնանալուց լիտու և այլ մասը մենք կը ծածկենք, կը կտրենք, կ'ալյունք ու ճշմարիտ որ ենթակա են ոչինչ չի զգալ: Նույն կերպով մենք կարող ենք ազդել նրա տեսողությունն, լսողությունն, հոտառությունը ու ճաշակի վրա:

Հասկանալի է, որ ներշնչումները պետք է չափազանց բաղաժամիւ լինեն: Քանի որ հիպնոսողը կարող է ներշնչել ենթակալին ամեն բան, ինչ որ նրա ֆանտազիան ընդունակ է թելադրելու:

Զգացողական ներշնչումները միջոցով, մենք տեսանյութին զցում ենք պատրանքներ և ընդ որ քննելի մեջ, որոնց մասին անհրաժեշտ է մի պարզ գաղափար ունենալ, որովհետև առանց նրանց ներշնչում չկալ:

ա. Պատրանք.—Իլլուզիա (illusion, иллюзия):

Նրբեմն մեր տեսած առարկաները կերպարանափոխում են ու ուրիշ առարկայի նմանություն տալով միզ համար.—Արտյակի զգացողությունը պատրանք է կոչում:

Այսպէս, մի լուծակի դիշեր անտառի ծառերը մեր աչքին ձիաւորներ են երևում, աւազակներ, հրացանը ձուռներին և մեր խոնկը ընկան: Կիսաքնի մեջ պատրանքները ասելի լաճախ են պատահում, այնպէս որ մի լուծի կծելը կիսաքնածին դանակի հարած է թւում, իսկ ճանճի բղղալը—ամպի դուռը: Իսկ հիպնոսի մեջ մենք հնչառութիւնով կարող ենք իլլուզիաներ ներշնչել, և քանի որ իւրաքանչիւր զգալարանք կարող է համապատասխան պատրանքներ ունենալ, որանք լինում են տեսողական, լսողական, և այլն:

Այսպէս, Բիշէի մի հիւանդը զնդաչիւր դանակի տեղ էր ընդունում ու աշխատում էր փակել, որ չը վնասի իրան (տեսողական պատրանք), մի ուրիշը նաշատիւր հոտոտելիս կարծում էր թէ օղըկոլոնի հոտ է առնում (հոտոտելիքի պատրանք), երրորդը հասարակ ջուրը—լաւարդովի գինու տեղ է խմում ու հարբում է, կամ խինան—շաքարի տեղ (ճաշակի պատրանք), չորրորդը մի որ և է թղկթղկոց լսելիս կարծում է թէ կրած շուրթին է լսում (լսողական պատրանք) և այլն և այլն: Հետաքրքրական են դէմքի փոփոխման ներշնչումները: Քնած ենթակալի ներշնչումին, որ նա զարթնելիս տեսնի աչք ինչ անձին արծաթէ քթով, կամ ոսկէ ատամնալոյ, կամ ալլանդական դէմքով, տեսանյութը կրկար միջոց զարթնելուց լիտու կը տեսնի նույն անձին աղալիսի օտարտախ քթով ու ատամնալով...

Աւելի հետաքրքրական են ցնորքները:

բ. ցնորքը — հալլուցիցիացիա — (hallucination — *ра-
зуби́нация*).

Պատրանքներ են ընկնելու համար հարկաւոր է, որ մի առարկայ ներկայ լինի, իսկ ցնորք չարուցանելու համար հարկ չկայ առարկայի օգնութեան գիտելու, այլ ուղղակի մենք ենթադրում ենք քննադատել իւր հինգ զգայարանքների միջոցով էլ զգալ բացակայ բաների ներկայութիւնը, կամ չը զգալ իւր առաջին գտնուող իրերի ներկայութիւնը:

Այս հիման վրայ ենթադրւած ցնորքները լինում են դրական և բացասական:

Դրական — երբ քննադատել է քնի մէջ, թէ քնից արթնանալիս, տեսնում է, լսում է և այլն. աչնայիսի իրեր, պատկերներ, գործողութիւններ, որոնք նրա առաջ չը կան: Բացասական, երբ նա չի տեսնում, չի լսում և այլն աչն իրերը, պատկերները և գործողութիւնները, որոնք նրա առաջն են:

Ծնորքները ուսումնասիրելիս միշտ պիտի աչքի ունենալ հետեւալ սկզբունքը:

Ծնորական առարկաները հիպնոսածի համար նույնպէս շոշափելի են և նույն պատկութիւններն ունին, ինչ որ իրական առարկաները արթուն մարդու համար:

Հիպնոսածի տեսած մարդը կենդանի, շարժւող, խօսող մարդ է, նրա տեսած ծաղիկը զոնաւոր, հոտալից ծաղիկ է և այլն: Վերջապէս քննադատող միայն համոզւած է թէ տեսնում է ցնորական առարկան, այլ և համոզւած է, որ շոշափում է, հաստատւում է, ճաշակում է նրան: Մի խօսքով ենթադրւածը խաբւում է իւր լսող զգայմունքներով, իւր ամբողջ նկարագրին զօրութիւնով:

ա) Օրինական երական ցնորքների (hallucination positive).

Մեր առաջ բերած օրինակը (քննադատել երեակապական ազգիում) բաւական էր ցույց տալու, թէ մինչև որ աստիճան կարող է հասնել դրական ցնորքը, մինչդեռ մենք ենթակալին կարողանում ենք տեսնել, հոտոտել, լսել տալ երեակապելի բաներ: Նոյն կերպով մենք ենթադրում ենք քննադատել, որ նա քնի մէջ, կամ դարձնելիս, այս ինչ տեղ այս ինչ առարկան տեսնի, կամ այս ինչ անձն գտնի և այլն: Մենք ամեն օր քննադատների ձևով տալիս էինք երեակապական թուզներ, կամ շնիկներ, որոնց նրանք փաղկալում էին, կամ ծաղիկներ, որոնց հոտից զմայլում էին, կամ տնտեսկը լցնում էինք երեակապական գաղափարով, որոնք սարսափ էին չարուցանում ենթակաների մէջ: Պ. Լիեժուան մէկին տեսնել տեղ երեք տարի առաջ մնւած հօրը, մի սպայի — իւր եղբորը, որը ուրիշ քաղաքումն էր:

Շարժվելն հետևեալն է պատմում. «մի օր հիւանդ կանանցից մէկը ցանկանում է քնադածութեան մէջ մի գերեզմանատուն տեսնել, կրօնական կան գերեզմանատան դռներ մտնելու, նա անվճարորար կանդ է առնում և լաւում է, որ անկարող է, ներս մտնել: Եւ հրամայում եմ առաջ գնալ, բանալ վանդակադռան, մտնել գերեզմանի մէջ ու բարձրացնել խոփը: Այս վաղրկելին աչք կ'իջնէ աչքալիսի լուսուճարի մէջ ընկաւ, աչքալիսի մի սարսափ ու զարկով զգաց, որ ընկաւ ցնցումների մէջ: Մի խօսքով կան ենթականեր, որոնք մենք, առանց խտրութեան, ամեն տեսակ դրական ցնորմութիւն կարող ենք ներշնչել:

բ) Օրինակներ բացասական ցնորքների (hallucination négative): Մենք կարող ենք ներշնչել ենթակալին, որ կարողալիս չը տեսնի որոշեալ տառեր, կամ ձայնաւորները, կամ ալ ինչ բաղաձայները և նա դուրս կը թողնի ապա տառերը իւր ընթերցանութեան միջից: Լիւսիսը աչքալիսի ներշնչում է անուամբ «Աչտեղ ութ կին ու վեց տղամարդիկ կան, երբ դուք կ'արթնանաք, ինձ միայնակ կը տեսնէք»: Եւ ճշմարիտ որ ենթական զարթնելիս պրոֆ. Լիւսիսին է միայն տեսնում, նրա հարցերին միայն պատասխանում, նրա շոշափումները զգում, ալ ինչ մնացած անձերը նրա համար գոյութիւն չունին, նրանց ձայնը չի լսում ու մինչև անդամ չի զգում, ի՞նչ նրանցից մէկը ծակտալի նրան ասեղով, կամ մի ուրիշ կերպ գրգռի: Մենք կարող ենք նաև տրիպլ հիպնոսածին արթնանալիս չը տեսնել շրջապատող անձերին, ալ տեսնել նրանց կրած առարկաները և ալն ժամանակ օտարտալ է տեսնել ապա խեղճերին, որոնց թւում է ի՞նչ գտակները ու ոտնամանները օդի մէջ կանգնած են ու լողում:

Մի սոնամբուլի Ֆերէն ներշնչում է, որ զարթնելուց վտու ալ ևս չը տեսնի նրան: Վեց օր շարունակ Ֆերէն աչք կ'ընձ համար գոյութիւն չունէր և ալ նա մեկն էր, ինչ որ կարող էր չիշեցնել նրան աչք բժշկին, մոռացած էր:

III. ԱՆՁՆԱՌՈՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒՄՆ (CHANGEMENT DE LA PERSONNALITÉ).

Պատրանքների և ցնորքների ուսումնասիրութիւնը միզ մի շարք լարածող փաստեր է տալիս:

Բաւական չէ, որ ներշնչումն փոփոխում է շրջապատող առարկաներից տաղած տաղաւորութիւնները, բաւական չէ, որ ներշնչումն տեսնել շոշափել և հինգ զգալարանքներով զգալ է առկա բացակա առարկաներ և մարդիկ, կամ ընդհակառակը անզգալ է դարձնում ենթակալին դէպի ներկա դանդաղ իրերը ու անձերը, — բաւական չին ալ միանգամաւն դարձանալի երեւոյթները, ներշնչումն միզ աւելի մեծ սխալարիզ է պատրաստում. — ալն սոնամբուլի անձնաւորութեան, նրա ետի ներշնչական փոփոխութիւններն են:

Ստեամբուլին կարելի է քնի մէջ ներշնչել, որ նա զարթնելիս, կամ արթնանալուց մի որոշեալ միջոց չկտու, քաղցած կամ ծարաւ կը լինի և նշանակած ժամին նա սատիկ կը քաղցի ու կը ծարաւի: Այսինքն է նմանապէս նրան ցաւի զգալ տալ, կամ լուծել տալ, կամ, ինչպէս կը տեսնենք մի քիչ չկտու, մինչև անգամ արիւնհոսութիւններ չարուցանել:

Այս դեռ բոլորը չէ՝ ներշնչման ազդեցութեան տակ ստեամբուլը կը համոզւի, որ ինքը մեղրամոլից, կամ ապակիից է շինած ու սատիկ զգուշ կը լինի, որ չը հալնի կամ չը փշուրի:

Այս ևսամուսցութիւնը, ինչպէս ցոյց տւեց Ռիշէն, կարող է անձնաւորութեան փոփոխման հասնել: Այս գիտնականը ցոյց տւեց, որ կարելի է ներշնչումով փոխել քնալածի հասակը, սիրը և ամբողջ անձնաւորութիւնը: Ռիշէն մի կեռջ ներշնչում է, որ նա զորապետ է, Հռոմի Պապն է, որ նա գերասան է, երեխայ է, կամ քարոզիչ է, կամ չուն է և ներշնչման ազդեցութեան տակ ևնթական կերպարանափոխում է, այլաստեւում գեներալի նման պատերազմական հրամաններ տալ, դերասանի նման լսմի վրա դեր կատարել, երեխայի նման խօսել ու խաղալ, կամ շան նման շորս ոտերի վրա մանդալ ու հաշալ և ալլել:

IV. ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՑՆՈՐՔՆԵՐ

Մինչև այժմ մեր քննած ցնորքները երկու կողմանի էին.— ներշնչածը երկու աչքով էր տեսնում, երկու ականջով լսում, երկու ձեռով շոշափում ցնորական պատկերները:

Բայց մենք կարող ենք մէկ աչքի, մէկ ականջի վրա միայն ազդել, աչք ժամանակ ցնորքը միակողմանի կը լինի: Այս ուղղութիւնով բազմաթիւ փորձեր արեցան Գիւմոնպալիէի ձեռով:

Այս բժիշկը բացում է ստեամբուլի աջ աչքը ու մի կտոր սպիտակ թուղթ ցոյց տալիս, ներշնչելով, թէ այս մի պատկեր է, չկտու փակելով աջը, բացում է ձախ աչքը և ասում է.— «դուք ոչինչ չէք տեսնում».— Զարթնելուց չկտու նկատում է, որ ցնորական պատկերը երևում է միայն աջ աչքին, իսկ ձախը սպիտակ թուղթն է միայն տեսնում: Ահա մի ուրիշ աւելի զարմանալի փորձ:

Գիւմոնպալիէն ստեամբուլի աջ ականջին ասում է՝ «ինչ հիանալի եղանակ է»,— իսկ ձախ ականջին՝ «անձրև է գալիս»: Այն ժամանակ դէպքի աջ կողմը ուրախանում է ու ժպտում, իսկ ձախը ընդհակառակը տախտակալի է և տխուր:

Յիշած գիտնականը չի բաւականում սրանով.— նա աւելի բարդ փորձեր է անում, միևնոյն ժամանակ տեսողական և լսողական միակողմանի լուղմուճքներ չարուցանելով: Քնալածի աջ կողմին (աջ աչքին և աջ ականջին) ներշնչում են մի խնջուքի տեսողական ու լսողական ցնորքներ, աչք ինչ

ձախ աչքին տեսնել են տալիս մի շուն և ձախ ականջին լսել տալիս աղ շան հաչքը։ Այն ժամանակ դէպքի երկու կողմը երկու հակառակ լուսմունքներ են ներկայացնում։

Ֆերէն բազմաթիւ փորձեր է արել զոյների ներշնչման մասին։ Օրինակ. նա ներշնչում է քնադածին թէ՛ ալս սպիտակ կարտոնը կարմիր կ'երևի նրա աջ աչքին, իսկ ձախին—սպիտակ։ Նրա ներշնչածը մէկ աչքով է նազում կարտոնին, կարտոնը կամ կարմիր է երևում կամ սպիտակ, իսկ երբ նա երկու աչքն էլ է բանում, այն ժամանակ կարմիր ու սպիտակ զոյները խառնւում են և կարտոնը ներկւում է վարդազոյն զոյնով...

Վ. ՅԵՏԱԶԴԵՅԻԿ ՅՆՈՐԱԿԱՆ ՆԵՇՆՁՈՒՄՆԵՐ

Մինչև այժմ նկարագրած ցնորական ներշնչումները կատարւում էին ներկայի կամ ազագույնի համար։ Ուրիշ խօսքերով, մենք ներշնչում էինք ենթակալին ցնորքների ունենալ քնած դրութեան մէջ, կամ զարթնելուց շատ թէ քիչ լետով։

Փորձերից երևում է, որ կարելի է և անցեալի համար ներշնչումներ անել, այսինքն կարելի է համոզել, որ նա մի օր, մի շաբաթ առաջ, մի խօսքով, անցեալում այս ինչ բանը տեսել է։

Ասպիտի ներշնչումները լատնի են և երբեք չեն ընկնում ներանոմի։

Այս հանդամանքը, ինչպէս կը տեսնենք լետով, մեծ կարևորութիւն ունի իրաւաբանական տեսակետներից, քանի որ կարելի է (ասում են) աղ միջոցով վկային կեղծ վկայութիւն անել տալ, ներշնչելով նրան, թէ նա այս ինչ օրը ականատես է եղել այս ինչ անցքին, օրինակ, մարդասպանութեան։ Այս կեղծ վկան ներշնչման ազդեցութեան ներքոյ, ինքն էլ համոզւած լինելով, որ ականատես է եղել այս երևակայական մարդասպանութեանը, ամենահատուաւ կերպով կը վկայի չը տեսած բանին։

Ե) Ներշնչալիւն արիւն հոսութիւններ և վիրակէտեր կամ արնադրոշմներ. — Ֆոկաշոնի, Բուրբիւ և Բիւրօի Մարիէի փորձերը. — Արնատառեր. — Լուիզա Լատօն և վիրակէտեր. — Բացատրութիւն. ինքնաներշնչումն։

Որքան աւելի խոր թափանցում ենք հիպնոտիսմի երևութները աչքան աւելի չիտթւում ենք մարդկային մտաւոր ու զգացական աշխարհի ընդարձակութեան առաջ...

Ո՛վ գիտէ, զի ու որչափ անսպասելի լատնութիւններ պէտք է տալ մեզ հիպնոտի ուսումնասիրութիւնը և որքան զի ու անկատ աշխարհեր պիտի հետազոտուին նա մարդկային հոգու խորքերում!...

Մեր մինչև այժմ պատմածը գրեթէ անհաւատալի էր, իսկ այժմ մենք պիտի մտնենք մի նոր, անսպասելիքներով լի աշխարհ

Շատ փորձեր ցուց են տալիս, որ ներշնչման միջոցով կարելի է լինում մարմնի մի որոշակալ մասից արիւն հոսեցնել:

Յալտնի է, որ մարդ, երբ առանձին ուշադրութիւն է դարձնում իւր մարմնի մի մասի վրա, սկսում է ծակոցներ, տաքութիւն, մանր ցաւեր զգալ աղ մարմնամասի մէջ: Բժշկական ուսանողները, սատորիկ կասկածոտ լինելով, ամեն տեսակ հիւանդութիւններն երևակալում ու ամեն տեսակ ցաւեր զգում: Իրանոնպալիէն ցուց տեց, որ կարելի է ներշնչումով մարմնի մի որ և է մասի տաքութիւնը անլացնել:

Բալց ամենից զարմանալին ներշնչական արիւն հոսութիւնն է:

1885 թ. մի ֆրանսիացի դեղագործ, Ֆոկաչոն (Focachon) անունով, որը ծանօթ էր հիպնոտիզմին, հետեւեալ զարմանալի փորձն է անում մի հիստերիկ կնոջ, Էլիզա Ֆ...-ի վրա: Պրոֆ. Լիւթօի, Բերնհարմի և ուրիշների ներկայութեամբ նա քնացնում է Էլիզալին ու մէջքին կայցնում է ութ հատ պոստալին մարկաներ, ներշնչելով, թէ ալս մի մուշկալ է: Միւս օր առաւտ ըտորի ներկայութիւնով արձակում են կապերը, պոկում են մարկաները ու տեսնում են, որ սրանց տեղը ալրման ճշաններն երևում, իսկ երկուցան, իրաւ որ, փամիուշտներ երևեցան, ալսինքն՝ մարկաները ճիշդ մուշկալի դեր էին խաղացել:

Միևեոյն աղջկալ վրա հետեւեալ տարին հակափորձ են անում, ալսինքն՝ ուտրին խոկական մուշկաներ են կայցնում ու ներշնչում են նրան, թէ ալս մուշկաները ոչինչ աղդեցութիւն չեն ունենալ նրա կաշու վրա: Եւ իրօք, մի քանի ժամից լիտոլ կաշին դեռ ոչինչ փոփոխութիւն չէր տալցել:

Նոյն 1885 թ. պ.պ. Բուրրիւ (Bourru) և Բիւրօ (Burot) քնալածում են մի տղամարդի ու ալս ներշնչումն են անում «Ալս երեկոյ քնի» մէջ կը գաս իմ առանձնարանը, կը նստես բազկաթուռի վրա, կը խաչես ձուռներդ կրծքիդ ու ալն ժամանակ քո քթից արիւն կը վաղդ»: Նշանակած ժամին ներշնչածը գալիս է նստում ու բազմաթիւ բժիշկների առաջ նրա քթից արիւն է սկսում կաթիլ:

Նոյն դիտնականները ալ մարդու երկու թեղի վրալ մի գուլ շուղի ծալրով զծում են ենթակալի անունը և ներշնչում են նրան. «Ալս երեկոյ, ժամի 4-ին, դու կ'ընկնիս քնի մէջ ու ալս զծած խաղերով արիւն կը հոսալ ու անուռդ արեան տառերով կը գրւի թեղի վրալ»: Նշանակած ժամին ենթական ընկնում է քնալածութեան մէջ ու, ճշմարիտ որ, զծած տառերի տեղերը արիւնով լցւում են, կալւում ու մի քանի կաթիլալ իւն է կաթում շատ զծերից: Նրեք ամից լիտոլ տառերը դեռ նշմարում էին:

Նոյնաման և դուցէ անլի զարմանալի փորձեր արեց և բժիշկ Մարիլը Լիւիզա Լատօի (Louise Lateau) գէպքը. վիրակէտի ու Ալս փորձերը ներշնչալին արնահոսութեան վրա մօտենում են ալն, միանգամալն անհաւատալի կաթած, երեւթին, որը նկարագրեց Լիւթիլսի պրոֆ. Դելբուօքը (Delboeuf):

Ապրիլի 24-ին 1868 թ. Զատիկից 12 օր անցած, իւր ամուսնութեան հինգերորդ օրը, մի 18 տարեկան կին, Լուիզա Լատո (Louise Latou) անունով, որը մի տարի հիւանդ էր, ձախ ոտի վրա մի կարմրութիւն է նկատում և մի քիչ փտող աղ կէտից սկսում է արիւն կաթել. Հետեւալ ուրբաթ օր արիւնը կաթում է աջ ոտից, փտող նոյնանման վերքեր լատնւում են ձեռների վրա էլ, իսկ հինգ ամսից փտող ճակատից էլ սկսում է արիւն կաթել:

Այդ դէպքը ալն աստիճան նորօրինակ էր, որ Ֆրիսովի նման խոհեմ դիտնականն անգամ կարողալիս բացականչեց՝ «ապէ կամ հրաշք է, կամ խաբէութիւն»: Այսօր, քանի որ կարողանում ենք փորձնական կերպով միենոյն անել, մենք ալ ևս չենք զարմանում Լուիզա Լատոի դէպքին, որովհետեւ նրա մէջ «աջ հրաշք կալ և ոչ խաբէութիւն»:

Այդ կնոջ կեանքի ուսումնասիրութիւնը ցոյց տուց, որ նա մի սաստիկ կրօնական մոլեռանդ կին էր և գիշեր ցերեկ չէր մոռանում Քրիստոսի կրած տանջանքները. նրա ուշք ու միտքը, նրա ամբողջ բանական աշխարհը լափշտակած էր Փրկչի խաչի վրալ կրած ցաւերով, Հասնում է Քրիստոսի տանջանքի շարաթը, նա տեսնում է եկեղեցում բոլոր ծիսակատարութիւնները. Յիսուսի խաչելութիւնը, մահը, փտող թաղումը. Այս նեարդալին արարածը իւրացնում է Փրկչի տանջանքները, և նրա լարւած երեակալութիւնը նրան զգալ է տալիս նոյնալիսի տանջանքներ, Բայց ահա Յիսուսի տանջանքի շարաթը Լուիզան ներկալ է եկեղեցական արարողութիւններին. նա տեսնում է Փրկչի խաչելութեան ու թաղման ծէսերը և ալս նեարդալին կնոջ երեակալութիւնը ալն աստիճան լարման մէջ է ընկնում, որ Զատիկի առաջի ուրբաթ օրը նրա ձախ ոտի վրա խաչելութեան միսի տեղը վերք է գոլանում, իսկ միւս ուրբաթ օրեր նոյնանման վերքեր բացւում են աջ ոտի, փտող ձեռների վրա ու վերջ ի վերջոյ նրա ճակատից էլ արիւն է հոսում, ինչպէս հոսեց Յիսուսի ճակատից, երբ նրա գլխին փշեալ սլոսի գրեցին... Չը մոռանանք, որ ալս վերքերը երեւան էին զալիս ուրբաթ օրերը, ալսինքն Քրիստոսի խաչելութեան օրը...

Այս աշխատանքի երկրորդ մասում, երբ կը խօսենք հիպնոտիսմի կրօնական նշանակութեան մասին, մենք ուրիշ օրինակներ առաջ կը բերենք կաթովիկ եկեղեցական պատմութիւնից. Այս վերքերը լատնի են ստիգմատ (stigmata) անունով, որը մենք վիբրակեալ կամ արնադրոշմ բառերով թարգմանեցինք:

Ուշագրութեան կենտրոնացման թէօրիան և ինքնաներշնչումն (Autosuggestion).

Ներշնչման ալ զարմանալի երևոյթների ծագումն բացատրելու համար մենք ոտիպւած ենք ենթադրութիւնների դիմել. Ամենից հասարակը և իրողութեանը մօտ հիպոթեզն ալն է, որ ալս բոլոր երևոյթները առաջ են գալիս ուշագրութեան կենտրոնացումից, որը աւելի սաստիկ է քնալածու-

թեան, քան թէ արթնութեան մէջ, Մեր ներշնչումը լարում է տոնամբովի ուշադրութիւնը դէպի նրա տեսողութիւնը, լսողութիւնը ու արգիւստով ցնորական առարկաներ լարուցանում:

Երբ որ ես ներշնչում եմ տոնամբովին, թէ նրա առաջ առիւծ է կանգնած, ես դրանով տօնարում եմ նրան լարել իւր տեսողութիւնը, իսկ որովհետեւ նա ամեն բանի հաստատմէ, կը համոզվի, թէ դադանը ափսոսել է ու արդ ժամանակ նրա բոլոր նեարդալին լոսանքը կենտրոնանալով տեսողութեան վրա, իրաւ որ ցնորական առիւծ կը ստեղծի Սւաք ուշադրութեան կենտրոնացումն հաստատում է նրանով, որ մի քանի զարգացած անձեր պատմում էին, թէ երբ նրանք քնալածութեան մէջ մի ցնորքահար ներշնչում էին տառնում, անկարող էին լինում զիմադրել ու տեսնում էին առաջ-ներին ներշնչած առարկան, թէն համոզւած էին, որ արդ պատկերը ցնորական է:

Առօրեայ կեանքի մէջ էլ մենք կայողանում ենք պարզ տեսնել մի տան, մի մարդու կերպարանք, մի անձ — հարկատու է միտին, որ մենք մեր բոլոր ուշադրութիւնը արդ առարկայի վրա դարձնենք:

Ինչպէս մենք տեսանք, զգալուն էակները աւելի լաւ կարող են խորատալանել և այս է պատճառը, որ Լուիզա Լատոն երեակալութիւնով խաչւում է, որ խուլ Բեթշոլենը երեակալութիւնով լսում է իւր դրած մնողիաները և կոյր Միլտոնը տեսնում է դրախտի շքեղութիւնը:

Այս խորատալանումն է, որ տօնարում է ծննդական ցածր զգալ մի կնոջ, որը մի ծննդականի երկունքի ճիշդ է լսում, կամ ցաւ զգալ իւր ատամներում, երբ ատամնաբուժը մի ուրիշի ատամն է քաշում: Մի աղջիկ, որը իւր անդամաւործ հօրը խնամում էր, ինքն էլ անդամաւործ դարձաւ: Այսպիսի օրինակները բազմաթիւ են: Միայն ափսոսելով, երբ այս երեկոթները նկատում են առանց հիպնոստիկ ներշնչման, ուշադրութեան կենտրոնացումն ինքն դառնում է ներշնչում և՛ ափսոսանակ ենթական ընկնում է ինքն ան և ընդաման աղդեցութեան ներքոյ: Այսպէս է բացատրում Լուիզա Լատոնի դէպքը:

III. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐԸ, (Suggestion d'actes)

Անմեղ և քրէական ներշնչումներ. — Ներշնչումն 63 օր, 172 օր և մի տարի ժամանակամիջոցով:

Ներշնչալը կատարում է ամեն տեսած ներշնչած գործողութիւններ կամ քնի մէջ, կամ զարթնելուց լիտու:

Պարիպի հիւանդանոցներում մենք ամեն օր ներշնչում էինք հիւանդներին, որ զարթնելուց մի շաբաթ, կամ երկու շաբաթ վտուղ դնան: Այս ինչ տեղ, այս ինչ բանը մերցնեն, տանեն այս ինչ տեղ և տան այս

ինչ մարդուն, ճանապարհին մանեն ճաշարան, ուսման աղտ ինչ կերակուրները, ապա ինչ գինին խմեն և ալլեն:

Ապա և որանմանները անմեղ ներշնչումներ ևն: Բայց քանի որ քնադածը կամք չունի, ոչինչ չի արդեւում մեղ նրան և լանցանքներ գործել տալ: Նամակի համալսարանում մեծ քանակութիւնով փորձերն արեւ, որոնցից հետեւում է, որ ներշնչումով կարելի է ենթակալին գործելուն, սուտ վկայութիւն, և մինչև անդամ մարդասպանութիւն, թունաւորութիւն գործել տալ: Քնադածի ձեռք տալիս են մի որ և է առարկայ, օրինակ, մի քանոն, հաւատացնելով, որ աղբ մի դաշտն է ու ներշնչում են նրան, թէ արթնանալիս նա կը սեննի աղտ ինչ մարդուն դռան առաջ կանգնած ու կը տղանի նրան: Հիշողութեամբ դարձնում է, ու որոշեալ թաղէին իլլիւլիակի (պատրանք) օրէնքին համեմատ, ձեռի քանոնը դաշտն կը դառնալ, իսկ ցնորքի օրէնքին համեմատ, անւանած անձն կ'երեւչ նրա աչքին նշանակած տեղը ու աղբ արթնուն մարդը մի թաղէ կը կարցնի իրան, խեղազարի նման վրա կը հասնի ուրախանի վրա և իւր երեւակաւկան դանտիլը նրա կուրծքը կը խրի: Յետոյ կը սեննի, որ աղբ մարդը ընկաւ, արեւնշաղաղ եղած ու ինքը, կարծես սթափելով, կը սալատի իւր եղունգործութեան առաջ... Վանի ժամանակ կարող է անցնել ներշնչման թաղէից մինչև իրադրութիւն:

Ահա մի քանի ներշնչումներ երկար ժամանակամիջոցով:

Ն ե ռ շ Ն չ ու մ Ն 63 օ Ր ժ ա մ ա ն ա կ ա մ ի ջ ո յ ո Վ:

Պ Ր Ո Ք. Բերնհարդը պատմում է հետեւեալ ներշնչումը, որը կատարում է 63 օրից լեռու «1883 թ. օգոստոս ամսին ևս տաւ հմ Ս.-ին, որը տնամբուղական քնի մէջն է.—Լաւ լեռնէք. հոկտեմբերի առաջին չորեքշաբթի օրը դուք կը գնաք բժիշկ Լիերօի տուն ու աշտակ կը տննէք Հանրապետութեան Նախագահին, որը ձեզ մի մեղալ կ'ընծակ ու թուակ կը կապի.—Կ'երթամ, պատասխանում է հիւանդը: Զարթեւելիս նա ոչինչ չի վիշտ, ևս նրան ուրիշ ներշնչումներ հմ անում և երբէք չեմ վիշտցնում նրան առաջինը: Հոկտեմբերի 3-ին (ներշնչումից 63 օր անց) տաւ հմ հմ բժիշկ Լիերօից հետեւալ տանը: «Ստանալու Ս.-ն աղօթ ժամը 10-ին եկաւ ինձ մօտ, մօտեցաւ գրադարանին և խոնարհ գլուխ տալով արտասանեց «Excellence!» (Զեղո պալատապալուտիւն) (գրական ցնորք) և ուրիշ անհասկանալի խօսքեր: Յետոյ ձեռք պարզեց, ասեց. «Merci, Excellence!» (չնորակալ հմ) և ալլեն:

Ն ե ռ շ Ն չ ու մ, որը կատարւում է 172 օրից լեռու:

1884 թ. իւլիսի 14-ին, պատմում է Բոնիար, ևս տաւ հմ օրիորդ Ա.-ին, որը քնադածութեան մէջ է, թէ լուծարի 1-ին ևս կը գնամ նրա մօտ Նոր-Տարին շնորհաւորելու: Յունիսի 1-ին աղբ օրիորդը հետեւալն է պատմում լւր ընկերւո՜ւն: «Սենեակումս նստած էի, երբ մէկը դուռս թխկի թխկացրեց և երբ ևս ձայն տուցի. «համէցէք», դուռը բացեց ու ներս մտաւ պարան Բոնիար,

որը մի լուսեից փտող անհետացաւ Եւ բացեցի լուսամուտը, նախքի փողոցը, բաց նրան ալ ևս չը տեսալո՛ւ:

Ներշնչում մի տարբի ժամանակով:

Եթէ չեմ սխալուամ, ամենաերկար ժամանակամիջոցով արած ներշնչումն լիեժուակի դէպքն է:

Հիպնոսելով երկտասարդ Պ. Ն.-ին, լիեժուան ատում է նրան. «Մի տարուց փտող դուք կը գնաք բժիշկ լիերօի մօտ ու շնորհակալութիւն կը լալտնէք նրան ձեր վրա ունեցած խնամքի համար Անտեղ կը գան նոյնպէս մի շուն ու մի վարժած կապիկ, որոնք զանազան խաղեր ցոյց կ'տան: Հինգ լուսեից փտող ներս կը մտնի մի գնչու (ցիգան) իւր հետ մի ուսեալ արջ բերելով և կ'ուրախանալ իւր կորցրած շուն ու կապիկը գլուխելով: Գնչուի գնալու ժամանակ դուք կը խնդրեք պ. լիերօից 10 սանտիմ ու կը լանձնէք ապր գնչուին»: Մի խօսքով, լիեժուան ներշնչում է մի շարք ցնորքներու Այս ներշնչման մեծ մասը ճշտութիւնով կատարուում է ուղիղ մի տարուց փտող, ներշնչած ժամին:

Մինչև աժմ ատաջ բերած օրինակներէց երևում է, որ թէ շարժումն երի, թէ զգացողութիւնն երի և թէ գործողութիւնն երի ներշնչումն երկար կարող են կատարուել (աչդ ներշնչողի կամքից է կախած) կամ քնաչածութեան մէջ, կամ հիպնոսական քնից դարձնելիս, կամ գարթնելուց մի քանի միջոց քետոյ (մինչև մի տարի):

Սակայն բոլոր ներշնչումները անտում են քնաչածութեան մէջ, Մենք կը տեսնենք որ կարելի է երբեմն արթնութեան մէջ էլ անել, Այս տեսակ ներշնչումն մենք կ'ոստումնաւորենք առանձնապէս Հմացումն (Fascination) անուանով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՑՔ

Մենք կամենում ենք վերջացնել արժետական քնաչածութեան համառոտ պատմութիւնը, մի ակնարկ գցելով հիպնոսի այս շրջանի բնաորոշ լուսկութիւնների վրա:

Քնաչածը կորցրել է կամքը, մոտաւոր արդելադժը կամ կոնտրոլը և այս հանգամանքից հետեում է ալն զարմանալի անպայման դիւրահաշտութիւնը, որը քնաչածական օտարտի երևութիւնի հիմն է:

Քնաչածի զգալարանքները, վիշողութիւնը ու մոտարկումն համարեա անհաստատի լարման են համեում և այս է պատճառը (ինչպէս կը տեսնենք աշխատանքիս երկրորդ մասում), որ քնաչածութիւնը ամենալի մեծ դեր է խաղացել մարդկութեան կեանքի մէջ:

Ձգալարանների վիշողութեան ու մոտաբերման այս արտատիւը լաշումն լիերօն բացատրում է ուշադրութեան կենտրոնացման

օրէնքով, որը կարուցանում է պատրանքներ (εκατοβία) և ցնորքներ (ραχ-
χοιδιασμός), իսկ երբեմն կարող է մինչև անգամ արհաւիրումներ ու
վերքեր առաջացնել (stygmates)։

Ներշնչման միջոցով հիպնոսողը փոխում է քնապածի զգացումները ու
նրան ամեն տեսակ դործողութիւնների կատարել տալիս ոչ միայն քնի մէջ,
ոչ միայն արթնանալիս, այլ և 6 ամիս, մի տարի լետու,—ոչ միայն անմեղ
դործեր, այլ և ամենաանխիղճ չարագործութիւնների, ինչպէս պնդում է
Նանսիի դպրոցը։

Սոնամբուռլիսմի ամենազարմանալի նշաններն են, որ
էլ ակն է, որ ակն նշն է մէջ կատարւած բոլոր մոռաց-
ւած է, երբ ենթակառար թնանում է։ Այս սոնամբուռլ, որի
զգալարանքները անքան լարած էին, որի վիշողութիւնը արդէտի վառ էր,
որը գնում էր, դալիս, խօսում էր, որը անքան ցնորքներ էր ունեցել, վերջա-
պէս նա, որը անքան լիակատար կերպով ապրում էր և հիպնոսողի ներշն-
չումով ամենաբարդ դործողութիւններ էր կատարում և մինչև անգամ լան-
ցանքներ, ոճիրներ էր դործում—այդ մարդը, հիպնոսական քնից զարթնե-
լով, ամեն ինչ մոռանում է։ Բոլոր զգացած, մոռած, կատարած մի ան-
կընթարթում անհետանում է նրա վիշողութեան միջից... Եւ դրա համար բաւա-
կան է միայն, որ հիպնոսողը վաղ նրա աչքերին... Հիմի, մի քանի
ժամանակից լետու, քնեցրէք նրան կրկին ու այդ մարդը, որը արթնու-
թեան մէջ ոչինչ չէր վիշում, այժմ կը մտարեթի նախընթաց քնապածութեան
մէջ տեսած, ստացած ներշնչումը...

Իսկ եթէ ներշնչումն արթնոյն ժամանակ մոռացւել է, ինչպէս է պա-
տահում, որ լանկարծ նշանակած լողէին ներշնչածը կատարում է ստացած
թեղադրութիւնը?

Հիպնոսիկները աշխատում են այդ դժար խնդիրը մեկնել նրանով, որ
մարդու միտքը ընդունակ է ժամանակի ընթացքը զգալ։ Ապաւէս, եթէ
մենք գիշերը պարթիւլիս, մոտադրենք սուսուտ, օրինակ, ժամը 6-ին զարթ-
նել, շատ հաւանական է, որ նշանակած ժամին վեր կենանք։ Ամենքին
պատահել է մոտադրել այս ինչ ժամին մի տեղ գնալ, կամ մի բան ասել։
Մինչև այդ ժամը մենք մոռացել ենք մեր դիտաւորութիւնը, իսկ այդ ժա-
մին մի ինչ որ պահանջ ենք զգում, մի բան պակասում է մեզ ու մենք
զգում ենք, որ մի բան պիտի անէինք։

Հիմի քնապածի վերադրութիւնով դուցէ նախ պիտի ենթադրել,
միայն հիպնոսի մէջ ալ «ժամանակի զգացումն», ինչպէս և նրա բոլոր հոգեկան
դործունէութիւնը չափազանցութեան է հասնում և ալ է պատճառը, որ
նրանք կարող են ուսելի քրիտիկ ժամանակամիջոցից լետու զգալ ներշնչումն
կատարելու պահանջը։

Մենք վերը տեսանք, որ ոչ մի տպաւորութիւն անվտար չի մնում
մեր վիշողութեան վրա և երբի ներշնչումներն էլ լետքեր են թողնում

քնալածի ուղեղում, լեռքեր, որոնք որսած ժամին կենդանութիւն ևն տոանում ու ալն ժամանակ ներշնչածը մի օտարտի անդիմադրելի պահանջ է զղում տոացած հրամանը կատարելու Երբ հասնում է ներշնչածը կատարելու ժամը, և նիւթական, որը մինչև աչքում արթնում էր, ընկնում է կրկին քնալածութեան մէջ, աչքին քն ալն դրութեան, որի մէջ նա ստացել էր աչք ներշնչումը Այս է պատճառը, որ նա դիմում է դէպի ներշնչած նպատակը, առանց կշռելու, առանց դատելու,—կոյր մեքենայի նման առաջ է մղում, փակ դռները խորտակելով, դիմադրող մարդկանց հետ զարմանալի ուժով կռուելով, հալեացքն առաջ լարած և իբրև մի կատարելալ խելագար, լցած մի անհասկանալի, բայց անդիմադրելի ուժով... ներշնչումն նրա համար մի idée—fixe է, որին նա պէտք է հասնի, թէկուզ ամբողջ աշխարհը անդիմադրելի... Յետոյ, թելադրումն կատարելուց փոստ, օրինակ, գողութիւն կամ երակալական մարդասպանութիւն գործելուց փոստ, նա կը խոտոտվանի իւր մեղքը ու կ'ասի, որ ինքն էլ չի հասկանում, թէ ինչի աղբ արեց, որ մի ինչ որ անդիմադրելի ուժ զղում էր նրան, և նա չէր կարող աչք չ'առնել:

Սակալն չը պէտք է կարծել, որ բոլոր հիպնոտիզներին կարելի է ներշնչումներ անել և որ ամեն տեսակ ներշնչումներ անշուշտ կատարւում են:

Պարիզի ուսումնարանն համաձայն, 100 հիպնոտիզներէ 15-ը միայն կարող են տնամարտվում հանել, իսկ ալ 15-ից հինգը միայն ընդունակ են շարժումներ և զգացողութիւններ ներշնչումներ տոանալու և միայն 2-ը (ապրինքն 20/0)—բարդ ներշնչումներ ընդունելու և իրադրութիւն:

Իսկ ինչ կը վերաբերի այն հարցին, թէ արդե՞ք ամեն տեսակ ներշնչումներ իրադրութում են, պէտք է պատասխանել.—«Այո»:

Բազմաթիւ փորձեր ցուց ևն սալիս (ինչպէս կը տեսնենք ալս աշխատութեան երկրորդ մասում, երբ կը խօսենք հիպնոտիզմի մասին իրաւարանական տեսակէտից), որ լաճախ ևն թական ընդդիմանում է, եթէ թելադրած գործողութիւնը նրա պատկարակութեան, համապատասխան ընդդէմ է: Պրոֆ. Բրուարդէլն (Brouardel) ստում է.

«Եթէ քնալածին զուրալի մի անձն նրան հաճելի կամ անտարբեր ներշնչումներ անի, նա կը հպտալի, իսկ եթէ ներշնչումը հակառակ է նրա անձնական զգացումներին կամ ընդդրումներին, սոճամբուլը համարես անլաղթելի դիմադրութիւն ցուց կը սալու:

(Կը շարունակի)